

պաշտօնով, որ միայն այն ժամանակ վայր դրեց
դէմքը, մինչեւ երկիրը միանգամայն խաղաղացաւ։
Ռաշիդ Նշանկեցի ԱՏմեդ ի. Եղեդ ի. Ու-
սոյդ Սուլթանին կառավարէ։ Երբ նա Հայաստան
եկաւ, նորա դէմ ապստամբեցան երկրում ապրող
խորապանները, որոնք Հայաշիւի հետ եւ նորանից
առաջ եկած էին. խմբելով նորա դէմ նորա
սկսեցին նորա հետ կռուել, թէ՛ «քեզ ոչ լսել,
ոչ հնազանդել կամինը»։ Այն ժամանակ Ռաշիդ
նշանկեցի Սայիդ ի. Սայիդ ի. Քոստայայ Բահիւնի.
Երբ նա Հայաստան եկաւ, զորք մի քանի ամիս
նորան հնազանդեցաւ, ապա միացաւ իշխանների
հետ։ Բար-էլ-արաւի բնակիչք ապստամբեցան
նորա դէմ եւ յարձակեցան նորա օգնականի վե-
րայ։ Սայիդ ի. Սայիդ ապակեմ էր նոցա իշխան
Նաշիդ ի. Հալիմին, որի որդին՝ Հոյուն ի. Նաշիմ
յարձակելով Սայիդի օգնականի վերայ Բար-էլ-
արաւում եւ ապակեմով նորան, ապստամբութեան
դուռը բարձրացրեց. ապա զրեց եղելութեան մա-
սին խաղաղաց թաղաւոր խաւարին, որ եկաւ նորա
մօտ ահագին զորքով, յարձակեցաւ մուսլիմների
վերայ, սպանեց եւ գրեց մեծ բազմութիւն։ Հառ-
նելով դուր գետի կամքին, նա գրեց (այստեղ
ապրող) մուսլիմներին, ապանել աւեց բոլորին,
նաեւ կանանք եւ երեխաներին, եւ այրեց երկիրը։
Առնելով այս գոյժը, Ռաշիդ ուղարկեց Բու-
նապարին (?)՝, հրամայելով նորան ձերբակալել։
Սայիդ ի. Սայիմին. երբ նա տեղ հասաւ, Սայիդ
աւեց նորան պարգեւներ, որ նա հաճութեամբ ըն-
դունեց. Ռաշիդ իմացաւ այս բանի մասին եւ ու-
ղարկեց Նաւոր ի. Հարիբ Մուհապարին կառավարի
պաշտօնով, սակայն չուսով հեռացրեց նորան եւ
նշանակեց Ալի ի. Իսայ ի. Մուհաննիս. նորա վառ
վարձուքի պատճառով Հարուանի բնակիչք ապ-
ստամբեցան նորա դէմ, եւ առհասարակ ամբողջ
երկիրը յաղկեցաւ։ Այն ժամանակ Ռաշիդ Նշանկե-
ցի Եղեդ ի. Մազեադ Հայրանիին կառավարէ.
միաժամանակ Հայաստանի եւ Արարկտականի վե-
րայ, որի գալովն զորք հանգրաւեցաւ եւ երկիրը
խաղաղացաւ եւ բարեկարգեցաւ. նա հաշտեցրեց
Նազարների եւ Եմինացիների, (բարի) յոյներ
աւեց իշխանաց ժառանգներին եւ նախարարներին.
Նորանից յետոյ Ռաշիդ զրեց խաղաղայն ի.
Խաղիմ Տամիմին կառավարիչ, որ ձերբակալեց
նախարարներին եւ իշխանաց ժառանգներին եւ
գլխաւոր աւեց նոցա. առհասարակ նա վառ վար-
ւեցաւ նոցա հետ։ Զորքան եւ Դաւանդաւ ապստամ-
բեցան. նորա ուղարկած զորադուռը թշնամին
կոտորեց. ապա նա յղեց նորա դէմ Սայիդ ի.
Հայազամ ի. Հարայ ի. Զահիբ Տամիմին բազմաթիւ
զորքով, որ պատերազմեցաւ Զորքանի բնակիչք եւ
Դաւանդաւի հետ, արտաքսեց նոցա երկրից եւ
վերադարձաւ Տփղիս։ խաղաղայն մնաց (Հայաս-
տանում) մի տարուց սակաւ. Ռաշիդ հեռացրեց
նորան եւ նշանակեց Սալէյման ի. Եղեդ ի. Նամ
Ամիրին, որ մի բարի եւ անհոգ ծերունի էր եւ

այն աստիճան թոյլ, որ նորա հրամանն անգամ
անկատար էր մնում, եւ երկիրը նորա իշխանու-
թեան տակից իսկ ելանելու մօտ էր։ Ռաշիդ Նշա-
նկեցի Արաւ ի. Զուֆար Հալալին, որի վերայ
յարձակեցան Դաւանդը, նա պատերազմեցաւ նոցա
դէմ։ Ռաշիդ ուղարկեց Մուհապար ի. Զուհայր ի.
Մուսայր դարբին, որ Ռաշիդի վերջին կառավա-
րին էր Հայաստանի վերայ։

(Հարաւ-իւրիւն)

Բ. ՆԱՍԻԴԻՆՅԱՆ



ՊԱՅՄԱՆԱՆ

ԱՆՈՒՆԱՅ ԳՎԱՏՄԵՐ, ԳՐԱՐԻՔԻ ԵՆՈՒՆԱՅ

Սա էր հաւատով քրիստոնեայ, բարե-
պաշտ ծնողաց զուակ եւ ազգաւ Հայ
ի ժամանակս իշխանութեան Տաճկաց
այսինքն Սուլթան Մահմադի, եւ էր յեր-
կէն Տիփլիսի, ի գեղջէն Խուսնապիլու,
ծնեալ եւ սնեալ ի մայրաքաղաքն Ղա-
լաթիայ, որ է հանդէպ Ղոստանդինու-
պոլսոյ։ Եւ եղբայր ոմն գրով սորա որ ի
մանկութենէ իւրում տաճկացեալ էր եւ
կարգեալ ի գունդս զօրականաց որ ասեն
«Դնիշէրի», եւ երթեւեկ առնելն նորա
առ եղբայրն իւր՝ յազգանէն սատանայի
բմբռնեալ զնա թլփատեալ եւ կարգեալ
են ի գունդս եղբորն իւրում, յոր եւ
քանիցս անգամ զնաց ի պատերազմ ընդ
զօրս Տաճկաց։ Իսկ նա զի ունէր զսէրն
փրիստոսի վառեալ ի սրտի իւրում, ոչ
կալաւ յանձին իւրում զայնպիսի հաւատսն,
այլ յետ ժամանակի ինչ փախեալ աստի՛
գնաց յերկիրն Ֆրանկաց, զի պահացէ
զհաւատս իւր քրիստոնէական. եւ
շրջեալ ի տեղիս ուխտից առ տապանի
Սրբոյն Հակոբայ Տեառն Լիզօրն, եւ ուխտ
արարեալ առ Սուրբ Աստուածածինն եւ
Ս. Ըռաքեալն Պետրոս եւ Պօղոս, եւ
այսպէս շրջէր յերկիրս քրիստոնէից զամս
բազումս վշտօք եւ տառապանօք
պանդխտութեամբ, զի թերեւս ներուքն
լիցի անցանաց իւրոց զոր եւ մեղան։ Եւ
այնու ոչ շատացաւ սիրտ իւր այսպիսի
մխիթարութեամբս, ասելով ես յուր
կորուսի զանրիծ եւ զանարատ հաւատս
իմ, անդ երթեալ դաւանեմ. եւ մտեալ
ի նաւ՝ եկն դարձեալ ի Ղոստանդինու-
պոլիս առ ծնողսն իւր մինչ դեռ եւս

1 Անուան առանց կոտորուածան է։

2 Թերեւս այլ անադրի անբերող գիր-
պանել է։

կենդանի էին: Եւ կեցեալ ի տան հօր իւրում առուրս յիշ, ասաց թէ ես վասն այսօր իրաց եկեալ եմ, զի յայանի խօստովանեցայց զՎրիստոս Լստուած ի մէջ հեթանոսաց: Եւ նորա ըստ գթոյ ծնողացն ասացին՝ թէ ոչ կարես ժուժել տանջանաց, այլ երթ գարձեալ յերկիրն քրիստոնէից եւ կաց բարեպաշտութեամբ, իսկ նա ոչ լուաւ նոցա, այլ գնաց յառուր տօնի Վերայման Ս. Խաչին ի գերեզմանս և այցոց ըստ սովորութեան նախնեացն յօրհուսն գերեզմանաց՝ ունելով ի գլուխ իւր զձեւ քրիստոնէից, եւ ոչ որ ինչ ասաց ջնա զայն օրն, եւ ի միւս օրն՝ որ էր երկուշարթի՝ եկեալ յեկեղեցին խոստովանեցաւ զանցանս իւր, եւ հաղորդեցաւ ի պատուական մարմնոյ եւ արեան Որդւոյն Լստուծոյ, եւ գնաց նոյն քրիստոնէական ձեռնոյն ի շուկանն ի մէջ Տաճկաց: Իբրեւ տեսին ասացին — այդ որպիսի՞ կերպարան է զոր զգեցեալ ես, ոչ եւ դու այն զօրական զոր այսչափ ժամանակաց հեռէ կեցեալ ես ի միջի մերում — եւ նա ասէ զօրացեալ ի Հոգւոյն Սրբոյ. — այո՛, ես եմ, ապա ոչ գտայ զօգուտս հաւատոց ձերոց. արդ հաւատ՝ ճշմարիտ քրիստոնէութիւնն է, զոր հաւատացեալ էի, եւ հաւատամ զՎրիստոս Լստուած եւ որդի Լստուծոյ: Իսկ անօրէնքն իբրեւ լուան զայս՝ զայրացան եւ կրճտեցին զատմամբն իւրեանց ի վերայ նորա, եւ արկեալ ի նա ձեռն՝ առեալ տարան առ դատաւորն եւ ասացին զպառնառ իրացն: Եւ հարց դատաւորն եւ ասէ զիսորդ համարձակիս արհամարհել զօրէնս Սահմէտի եւ ոչ կեաս ի պատուի քու՛մ զոր ունէիր յառաջագոյն: Եւ նա ասէ. — Օրէնք քո առ քեզ եղեցի ի կորուստ, եւ զպատիւս քո ոչ ընդունիմ որ առ ժամանակ մի է, այլ ես գտեալ եմ պատիւ որ անանց եւ յաւիտեանական է: Ինչ որ բարկացեալ դատաւորն՝ հրամայեաց հարկանել զգերան նորա եւ տանել առ վէզիրն: Եւ նա կեցեալ առաջի նոցա համարձակ խոստովանեցաւ զՎրիստոս Լստուած: Եւ յորժամ լուաւ զհամարձակութիւն դաւանութեան նորա, ասաց վէզիրն՝ խնայարեալ է, արկեք զդայ այսօր ի բանտ: Եւ յորժամ աճին ի միւս օրն յատեան, նայ

դարձեալ զնոյն բանս խօսեցաւ աներկիւղ եւ անկասկած՝ թէ քրիստոնէայ եմ եւ Վրիստոսի ծառայ, եւ ոչ եմ խնայար, որպէս եւ դուք ուսուցիչ զոր ես ոչ ընդունիմ: Ինչ որ յոյժ սաստկացեալ փաշայն՝ հրամայեաց տանել զնա ի կախաղանս առ փողոցէ քաղաքին, զոր եւ վաղվաղակի կատարեցին զհրամանս նորա: Եւ յորժամ տանէին զնա ի տեղի կատարման, եւ նա ի ճանապարհին ուսուցանէր զհաւատացեալսն հաստատուն կալ ի հաւատս Վրիստոսի եւ ինքն ի փառաւորելոյ զՎրիստոս Լստուած ոչ դադարէր: Եւ կացեալ ի կաղախանի առուր երկուք եւ լուսափայլութիւն երեսաց նորա ոչ նուազեցաւ, այլ որպէս ի քուն կայլ զառուր երկուք՝ վկայ անմեղութեան նորա: Եւ տեսեալ անօրէնքն՝ եթէ գրոհ տուեալ հաւատացեալքն քան ի տեսանել զհանդէս մարտիրոսութեան նորա, իջուցեալ ի կախաղանէ՝ արկին ի ծով: Եւ այսպէս կատարեցաւ Ս. վկայն Վրիստոսի Լստուծոյ մերոյ ի թվին ՌՂԺԵ ի Սեպտեմբերի ամսոյն ժէ յառուր չորեքշաբթի, որոյ յիշատակն աւհնութեամբ եղեցի, եւ մաղթանաւք սորա Տէր Վրիստոս Լստուած մեզ եւ ձեզ ողորմեսցի. ամէն:

Այս վկայաբանութիւնը հանուած է նօտրդիր ժողովածոյ զրազիրէ մը, գրեալ ի թուին Հայոց ՌժԺԲ, որ կը գտնուի Անտոնեան Միաբանութեան Մատենադարանին զրազրաց շարքին մէջ լգ թուահամարի ներքեւ, զոր փութացից հրապարակել օգտաշատ Հանդէսիս միջոցաւ ի գիտութիւն Յարգոյ ընթերցողաց:

Է. ՆՍՏԱՆՍ Է. ՍՐԱԳՈՅՆ
Միաբան Անտոնեան



ԱՅԼ ԵՐԱՅԵ

ՆՆՄԱՆԷ ԻՄԲԱԳՐԱԹԵՆ

Ի դիմաց "Սափիրի", խմբագրութեան պատիւ ունիմ յայտնել Ձեզ հետեւեալը: Անվերջ գործադուլներէ, տպարաններէ եւ վիճաբարտանց դէմ ստեպստեպ սարքւող բոյկոտներէ եւ այլ հազար ու մի արգելադիմ հան-